Ամ-1609

№ 1 «ԱԼԻՔ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ԲԵՏՐԵԿ

ԸՆԿԵՐ, ՄԻ ԴԻՄԱՃԱՆԻՐ

Գինը է 3 կոպ.

Թարգմ. ռուս. Ս. Խ.

1907 թ.
ԹԻՖԼԻՍ

АМ-1607

№ 1 «ԱԼԻՔ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ԲԸՏՐԸԿ

ԸՆԿԵՐ, ՄԻ ԴԻՄԱՃԱՆԻՐ

Հ 25102

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Գինը է 3 կոպ.

Թարգմ. ռուս. Ս. Խ.

ԹԻՖԼԻՍ
Էլեֆտրաստարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» Ս. Պ. Եղիգարեանցի.
Մադաթ. փող. № 5.
1907 թ. (11)

ԸՆԿԵՐ, ՄԻ ԳԱՒԱՃԱՆԻՐ!

(Շտրէյքէյխերի յորդորը)

Լսիր, ընկեր!...

Եւ այդպէս, հրաժարուեցիր մասնակցել մեր միութեանը. դու չես ցանկանում մեզ հետ ձեռք ձեռքի տուած գործել այն շարժման և պայքարի մէջ, որը մենք սկսեցինք, որպէսզի ձեռք բերենք մեր աշխատանքի ու կեանքի որոշ բարելաւումը։ Դու չես ցանկանում լինել ընկեր այն կուռում, որը պէտք է թեթևացնէ մեր թշուառ, չարքաշ կեանքը։ Բայց դուցէ դու չես հրաժարուի լսել մի քանի խօսք, որով ես քեզ եմ դիմում. դու իհարկէ ականջներդ չես փակի և չես հրաժարուի լսել իմ ճառը. դուցէ համբերութիւն ունենաս մի քանի րոպէ և թոյլ կըտաս ինձ ասել այն, ինչ որ ես եմ մտածում փորձել քեզ ապացուցանելու քո մոլութիւնները, և իմ բոլոր ասածների ամբողջ օգուտը ու արդարութիւնը։

Չէ՞ որ դու չես հերքի, որ արեւը լոյս է տալիս։ Երբ մեր գիւղում, միութիւն կազմեցինք աշխատանքի պայմանները բարելաւելու նպատակով և երբ համարեա բոլոր բանւորները նրան մասնակցեցին, դու ասեցիր, թէ այդ միութիւնը մի թակարդ է, որ պատրաստել են սոցիալիստները բանւորներին խաբելու

համար, թէ որ մի յոյս չըկայ աշխարհը շրջելու և կազմակերպելու մեր ցանկացածի պէս, թէ մինչև այժմ աշխարհում եղել են աղաներ և տէրեր, նրանք կըմնան և սրանից յետոյ, թէ միանգամայն յիմարութիւն ու անօգուտ է փորձել որևէ կերպով բարելաւելու մեր կեանքը։

Բայց նայիր դու ուշի ուշով. և կըտեսնես, որ թէև ոչ բոլոր բանուորները մասնակցեցին ժիւրեանը և ոչ բոլորը հասկացան նրա անհրաժեշտութիւնը, բայց և այնպէս այժմ արդէն շատ բան է փոխուում մեր աչքի առաջ ու կատարուում է բոլորովին այլ կերպ, քան առաջ։

Առաջ գոյութիւն չունէին պայմանագրեր, որոնք կանոնաւորէին և կարգաւորէին որոշ պայմաններով մեր աշխատանքը։ Տէրերը, ինչպէս մեզ, նոյնպէս և մեր իրաւունքները ոչ մի բանի տեղ չէին դնում. տէրերին մենք շատ քիչ էինք տեսնում, երկու երեք անգամ ամբողջ ամառուայ ընթացքում, և խօսել նրանց հետ կամ մտնել բանակցութեան մէջ չէր թոյլատրուում։ Գործակատարները կամ վերակացուները ունէին անսահման իրաւունք մեզ վրայ։ Մենք ստիպուած էինք բաւականանալ ցածր վարձագնով և լուռ տանել մեզ հասցրած բոլոր անարդարութիւնները։

Այժմս արդէն գործերը գնում են ուրիշ կերպով։ Շատ տէրեր այժմ անհրաժեշտ են գտնում բանակցութիւնների մէջ մտնել մեզ հետ, պայմանագրեր ու դաշինքներ կապել, որոնց մէջ միանգամայն պարզ որոշուում են մեր բոլոր պարտականութիւններն ու անելիքն աշխատանքի ժամանակ. նրանք այժմս քիչ-քիչ սկսում են անհրաժեշտ գտնել մեր ռոճիկների աւելացնելը։

Մեզ հետ սկսում են վարուել աւելի լաւ, քան առաջ և մեր հասցէին ուղղած վիրաւորանքները կարծես

նոյնպէս նուազում են. ընդհանրապէս սկսում են յարգել մեր մարդկային արժանապատուութիւնը և աւելի բաղաքավարի լինել։

Այս բոլորը կատարուեց մի քանի ամսուայ ընթացքում և դա մեր կազմակերպութեան, մեր միութեան անմիջական հետևանքն էր։ Իսկ դու, աչքի առաջ ունենալով այս բոլորը, յիմարի պէս կըսկսես պնդել, թէ անկարելի է փոխել իրերի դրութիւնը այս աշխարհում. և մի՞թէ դա միևնոյնը չէ, եթէ ասես, թէ արևը չէ լուսաւորում մեզ երկնքից։

Դատանել, այսինքն ուզում եմ ասել... Ուրեմն, եթէ ճիշտ է այն, որ մեր միութեան օգնութեամբ մեզ յաջողուեց ձեռք բերել մի քանի բան, ապա ինչու, ասա ինձ, ընկեր, դու այնուամենայնիւ շարունակում ես մեղնից հեռու մնալ։ Կամ թէ չէ մենք արժանի չենք ունենալ քեզ իբրև ընկեր, մի՞թէ դու էլ մեզ պէս մարդ չես։ Չէ որ մենք քեզանից չենք խնդրում որևէ չափազանց դժուար, անկարելի բան, մենք միայն ասում ենք, մի՛ խանգարիլ մեր գործին։ Հասկանում ես դու արդեօք այդ խօսքերի նշանակութիւնը։ Գիտե՞ս դու արդեօք ինչ է նշանակում դաւաճանել պրոլետարիատի, բանւոր-աշխատաւոր ժողովրդի գործին։

Այդ նշանակում է սեփական կրծքով պաշտպանել տիրոջ շահերը, նրա իրաւունքները։ Այդ նշանակում է խանգարել բանւոր—աշխատաւոր ժողովրդի ազատագրութեանը, այդ նշանակում է քո սեփական մարմնով փակել դժուար ճանապարհը այն անբախտների առաջ, որոնք դուրս են եկել դաժան կռուով իրենց, և իրենց եղբայրների համար աւելի նոր ու լաւ վիճակ ստեղծելու։

Քո սեփական շահը...

Բայց դու պատասխանում ես, որ գնալով բանելու, երբ միւսները յօժարակամ նրանից հրաժարւում են, դու բնաւ չես ցանկանում ընկերներիդ վնասել. այլ լոկ քո անձնական շահն ի նկատի ես առնում, և ցանկանում ես ծառայել տիրոջդ։

Վերլուծենք այժմ, յիրաւի, ինչ՞ումն է կայանում քո շահը, քո օգուտը։ Նրանում, որպէս զի աշխատես 40 սալդօ փոխանակ 35-ի, աշխատես 8-ը ժամ փոխանակ 9-ի, յաճախ միս ուտես, քան թէ ցամաք հաց, քնես փափուկ անկողնի վրայ բրդի վերմակի տակ, ժաքուր սենեակում, և ոչ թէ ձգւել խոտի վրա ժութ, խոնաւ նկուղում։ Ուրեմն գնալով գործի, երբ ընկերներդ գործադուլ են յայտարարել, դու դրանով բոլորովին չես ծառայում քո իսկական շահերին, որովհետև դրանից, այսինքն քո այդպիսի վերաբերմունքից օրավարձդ չի աւելանայ, բանւորական օրդ չի կրճատւիլ, արդիւնքդ չի մեծանայ, թէկուզ տէրդ քեզ օրական աւելորդ մի քանի կոպէկներ վճարի, չէ՞ որ դա որոշ չափով կըլինի մեր ընդհանուր գործին դէմ կատարած դաւաճանութեանդ վարձատրութիւնը։ Ուստի քո իսկական շահը ոչ թէ նրանումն է, որ քծնելով ճորտի նման ծառայես քո տիրոջը և դաւաճանես ընկերներիդ, այլ նրանում, որ դու թէ այսօր և թէ միշտ ապացուցես քո ունեցած համերաշխութիւնը նրանց հետ։

Եթէ նրանք մի բան ձեռք բերեն, զոր օրինակ՝ իրանց վիճակի որևէ բարելաւումն, չէ՞ որ այդ բարելաւումից դու էլ մասն ունես, չէ՞ որ նրանք այդ ձեռք են բերում նաև քեզ համար. քո ընկերների ջանքերով ստացած այդ բարելաւումը, որպիսին է աշխատավարձի բարձրացնելը կամ աշխատանքի ժամերի կըր-

ճատելը, չէ՞ որ տէրերի ինքնակամ նուէրներ չեն և ոչ էլ տուած վարձատրութիւն ընկերներիդ զարձացնելու համար, այլ մնայուն և մշտական յաղթանակներ։ Տէրերն այլ ևս չեն կարող վերստին յետ խլել այդ բոլորը մեզնից, այդ ձեռք բերուած նոր բարիքները պատկանում են ամբողջ բանուորական դասին և ոչ թէ միայն քեզ։

Ընկերական զգացմունքը, շահերի ընդհանրութիւնը քեզ արդելում են։ Ահա դարձեալ դու առարկում ես միութիւնների և գործադուլների դէմ, որ գործադուլ անելով բոլոր ընկերներիդ հետ դու. իբր թէ պատճառում ես տիրոջդ այնպիսի մի չըտեսնուած մեծ վնաս, որ նա այդ երևի քեզ երբէք չի ների և կաշխատի քեզնից վրէժ լուծել, երբ որ դու կարիք կունենաս նրա օգնութեանը։

Եւ քո այդ վախը չափազանցրած է։ Անշուշտ, եթէ գործադուլ անես, դա բնաւ բաւականութիւն չի պատճառի տիրոջդ, բայց չէ՞ որ ընդհանուր գործադուլի ժամանակ նա գործ կունենայ ոչ թէ միայն քեզ հետ, այլ բոլորիս հետ, և ինչո՞ւ այն ժամանակ նա միմիայն քո ընտանիքից պէտք է վրէժ առնէ։

Մի՞թէ չես տեսնում, թէ որքան ենք մենք։

Մեզպէսների թիւը հարիւրների, հազարների, տասնեակ հազարների է հասնում և մենք բոլորս գըտնուում ենք միատեսակ դժոխային պայմաններում։ Եթէ տէրը ցանկանայ մեզանից մէկից ոխ հանել, մենք չենք թողնի մեր խեղճ ընկերոջը, ամեն կերպ կըպաշտպանենք նրան և տէրը ստիպուած կը լինի հրաժարուել այդ ոխից, ինչպէս նա այժմ հրաժարուում է իւր ստացուած արդիւնքների մի մասից։ Այնուհետև ինքդ կշռադատիր. այժմ մենք ամեն ճիգ ենք թափում, որ ստիպուած չը լինենք կարիքից ձմեռներն ի հաշիւ հետևեալ ամառայ աշխատավարձի առաջուց

պարտք առնել տիրոջից։ Մեր դժուար աշխատանքը պէտք է վարձատրուի այնպէս, որպէսզի մեր ընտանիքները գոնէ ունենան ձմեռուայ անհրաժեշտ ապրուստը, որպէսզի ստիպուած չըլլինենք ամեն անգամ ստորանալ, խոնարհուել և աղերսել տիրոջից մի պարկ ալիւր կամ ցորեն։

Քահանան ստախօս է։ Վերջապէս գործադուլի դէմ արած առարկութիւններիդ մէջ պնդում ես, որ ըմբոստութեամբ այս աշխարհում ոչ ոք ոչնչի չի հասել և երբէք էլ ոչնչի չի կարող հասնել։ Ասում ես, թէ աւելի լաւ է սպասել, մինչև որ հարուստները ինքնայօժար կը կատարեն այդ զիջումները, որոնք մենք այժմ նրանցից պահանջում ենք. այդ զիջումները պէտք է համբերութեամբ սպասենք, չը դիմելով ոչ գործադուլների և ոչ էլ սպառնալիքների, որովհետև բոլոր գոյութիւն ունեցող կարգերը լաւ են ու խելացի, և մահացու մեղք է փոփոխութիւններ պահանջել, դա նշանակում է դէմ գնալ Աստծուն, դէմ գնալ Նրա սուրբ կամքին։

Քահանան, որը սովորեցնում է քեզ այդ տեսակ հնազանդութիւն, ծածկում է քեզնից այն բոլորն, ինչ որ նրա եկեղեցին ու հոգևորական խմբակը կատարել է ամբողջ պատմութեան ընթացքում։ Ո՞րքան արիւնահեղ կռիւներ, որքան մարդկային կեանքեր. հազարներով, տասնեակ հազարներով զոհ են գնացել միայն այն պատճառով, որ եկեղեցին ագահութեամբ ձգտում էր դէպի աշխարհի տիրապետութիւնը, դէպի երկրային իշխանութիւնը։ Խոնարհամտութեան ու ստրկական հնազանդութեան ապիկար գաղափարը անբարոյականութիւն է, դէմ է կրօնին, դէմ է Քրիստոսի վարդապետութեանը, հնազանդուել և հանգիստ նայել, թէ ինչպէս այս աշխարհում անարդարութիւնն է թագաւո-

բում, տեսնել մեր գաւակների տանջանքները հիւանդութեան ճանկերում, մինչդեռ հարուստները և բախտաւորները անդորր սրտով վայելում են կեանքի բարիքները։ Լուռ ու մունջ խոնարհեցնել գլուխը մի ինչ որ դործակատարի կամ վերակացուի ամենակարողութեան առաջ, տանել անձայն և դործի կանգնելով նախօրօք համաձայնուել երկրի պտուղների անարդար բաժանման հետ, որոնք մենք ենք արտադրում մեր չարքաշ ծանր աշխատանքով։ Ո՛չ, այդ բոլորը հեռու է քրիստոնէութիւնից, որովհետև Քրիստոսի վարդապետութիւնը, բոլոր նրա ժաքերը, նրա սէրը դէպի մարդիկ սփուեցին, տարածուեցին աշխարհումս, որպէս բողոք բռնութիւնների ու անարդարութիւնների այն անդնդի դէմ, որում թաղուել էր այն ժամանակուայ մարդկութիւնը։

Քրիստոսը ինքը ասաց, թէ բերել է աշխարհին ոչ թէ խաղաղութիւն, այլ սուր։ Եւ իր վարդապետութեան ու դէպի տառապողներն տածած իր սիրոյ համար այդ սրով նա պատերազմելու գնաց ընդդէմ ստրկութեան։ Թէև շատ դարեր են այդ օրուանից անցել, բայց և այնպէս ստրկութիւնը վերջապէս խորտակուեց, խորտակուեց Քրիստոսի սրի հարուածների տակ. ուրեմն, հարկաւոր չէ հլու հնազանդ սպասել, մինչև որ տէրը իր բարի կամքով ու քէֆով բարեհաճի մի փոքր լաւացնել մեր դրութիւնը. հարկաւոր չէ լսել քահանայական խորհուրդները չէ՞ որ քահանան տիրոջ հետ միասին ցանկանում է, որ դու ծնկաչոք միշտ նրանց առաջ սողաս։

Ո՛չ, դու պէտք է գնաս մեզ հետ մեր շարքերում, որպէսզի թիկունք թիկունքի տուած կռուես՝ բոլոր հասարակական անարդարութիւնների դէմ, որոնք ճնշում են մեզ, աշխատաւոր ժողովրդիս և մեր կեանքը դարձնում լացի, վշտի և տանջանքների մի ծով։

Ընկեր! եղբայր! մի դաւառնիր մեզ։ ԴԷՀ լսիր ընկեր! լսիր իմ այս խօսքերը և հաւատա որ քո շահը, քո օգուտը և քո պարտքը կայանում է նրանում, որ դու քո ձեռքը մեկնես բաղդակից ընկերներիդ։ Նախ քան վերջնականապէս վճռել և քո ընկերների գործին դաւաճան հանդիսանալ, դառնալ Յուդա, մատնիչ, շտրայկբեխեր, կանդառ, մտածիր ընկեր։ Յիշիր, որ դու էլ, ինչպէս բոլորը, անբաղդ ես, որ քո վիճակը դաժան է ու տխուր, որ քո ձեռքերը անդադար աշխատելուց կոպտացել են և ծածկուել կոշտով, որ քո խրճթում ոչ ամեն օր կուշտ ստամոքսով են, որ խաղաղութիւնը ու հանգստութիւնը միշտ չեն թագաւորում քո ընտանիքում, որովհետև կսկիծն ու կարիքը իրանց հետ բերում են միշտ անբաւականութիւն, տրտունջներ և խռովութիւններ. յիշիր վերջապէս, որ դու ինքդ, ինչպէս էլ որ քեզ կոչէին, որտեղացի էլ որ լինէիր, ինչով էլ որ պարապէիր, եթէ դու բանուոր ես, այն էլ գիւղական բանուոր, վարձկան մշակ, դու տանջւում, չարչարւում ես այս աշխարհում, ուստի և պէտք է զգաս քո դառը վիճակը, քո ծանր կեանքը փոփոխելու բուռն ցանկութիւնը։

Այսպէս ահա բոլոր քո ընկերները, որոնք նայում են այժմս, թէ ինչպէս դու գնում ես բանելու նրանց փոխարէն, դրանք բոլորը այն դժբաղդ ժողովուրդն է, որ կուում է, պատէպատ է ընկնում, դիմում է գործադուլների, որպէսզի բարելաւի իր դառն վիճակը։ Նրանց մի մատնիր, նրանց գործին մի դաւաճանիր, ո՜, եղբայր աշխատաւոր, մի՛ սրբապղծիր քո խիղճը, եղբայրասպանութեան մեղք մի գործիր։

Աչքդ մի փակիր...

Նայիր, քո առաջ ծնւում է նոր չտեսնուած աշխարհ, տես, քո ընկերները կարողացան միանալ մի

ընդհանուր դրօշի տակ, տես ինչ հպարտ տարածու�է նրանց դրօշակը, լսիր, ինչպիսի հուժկու երգ է հնչում նրանց կրծքից և պահանջում է հաց, ընկերասիրութիւն և քուն, որը չէ խանգարուում խղճի խայթոցով։

Վախով և թերահաւատութեամբ մի նայիր այս ամբողջ ժողովրդի վրայ, որը դէպի քեզ բարի է, որը ժամէ ժամ սպասում է քո մօտենալուն, որպէսզի սեղմի ձեռքդ ընկերական վառ սիրով, որպէսզի բաժանի քեզ հետ ընդհանուրի ծանր վիճակը։

Մի ստիպիր քեզ երկար սպասելու, կամակոր ընկեր։

Թող գործդ, հեռացիր դաշտից, որտեղ քեզ միայնակ թողեցին ընկերներդ։ Թող գործարանն ու արհեստանոցը, որի հետ քեզ այժմ կապում է քո եսականութիւնը ու տգիտութիւնը. և գնա նրանց հետ, կատարիր մարդկային և բանւորական պարտականութիւնդ։

Եթէ դու չես լսի այս խորհուրդները և կը շարունակես քո ընկերներին դաւաճանել, այն ժամանակ կը զգաս սխալներիդ ամբողջ ծանրութիւնը։ Քո ընկերներից մի քանիսը, ամենից շատ զրկուածները, աւելի տաքագլուխներն ու անհամբերներ, կամենալով քեզ արգելել աշխատելու, կարող են սխալներ կամ նոյն իսկ յանցանքներ գործել, նրանց կարող են ձերբակալել, դատարանին յանձնել, դատել, բանտարկել և նոյն իսկ կեանքից զրկել։

Եւ կը ողբան մայրերը, կը հեկեկան նրանց կանայք, կը տուժեն միանգամայն անմեղ նրանց զաւակները և քո սիրտը այս բոլոր տանջանքներից կը մռայլի կսկիծով, քեզ կը տանջի խիղճդ և դու հանգիստ չես գտնի կեանքումդ։ Եթէ դու սիրտդ, խելքդ

և մինչդ բաց կանես եղբայրական զգացմունքների համար և եթէ անձդ կընտրես այն պարտականութեանը, որին քեզ կապում է բոլոր բանուորների և աշխատաւոր ժողովրդի եղբայրութիւնը, ընդհանրութեան շահը, դու այն ժամանակ արհամարհանքով կընայես այն բոլոր գայթակղութիւնների հրապոյրների վրայ, որոնցով քեզ ուզում էր գայթակղեցնել ու գրաւել քո տէրը, դու կըթողնես դաշտը, կըթողնես հողը, որը դու այսքան տարի զուր տեղը ջրում էիր քո քրտինքով, և կըմիանաս գործադուլաւորներին, բանուորների և աշխատաւորների այն մեծ բանակին։

Այն ժամանակ մինչև վերջ կատարելով քո պարտքը և վերադառնալով գիշերը քո սիրելիների և ընտանիքիդ մօտ, դու նրանց կասես հանգիստ հոգով ու մաքուր սրտով. «Որդիքս, այն հացը, որը ես պէտք է ձեզ բերէի այս երեկոյ, թրջուած կը լինէր իմ և ձեր հազարաւոր ընկերների արտասուքով, այն փողը, որը ես այսօր վաստակելու էի դաւաճանութեան գնով, դրոշմուած կը լինէր անէծքով։

Եւ ահա ես գերադասեցի վերադառնալ ձեզ մօտ և բերել ձեզ ամենաաղքատ ընթրիք. թող դա լինի չոր հացի հասարակ մի կտոր, բայց մենք կուտենք այդ հանգիստ խղճով։

Ես ցանկացայ մասնակից լինել իմ ընկերների վիճակին և տանջանքին, որոնք գլուխ են բարձրացրել, կռւում են, մարտնչում թէ իմ և թէ ընդհանուր գործի համար։ Ես հաւատացած եմ, որ այսպէս վարուելիս թելադրում էր իմ պարտքս և եթէ դուք մի քիչ նեղութիւն կրէք, տանջուէք այն հանգամանքից, որ ես գործադուլ եմ արել, ես յոյսով եմ, որ ինձ կը ներէք»։

Եւ այն ժամանակ քո կինդ և որդիքդ քեզ կը ողջագուրեն, կը փայփայեն ու կը ծածկեն ջերմ համբոյրներով։ Ընկեր, եղբայր, մի դաւաճանիր մեր ընդհանուր գործին։

ՀԱՅԿ ԳԵՐՄԱՆՈՍՅԱՆ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220025102

[044.]

II
A 25102

ԴԻՄԵԼ՝

Թիֆլիս, «Դուստենբերգ» գրախանութը և Н. Матинянц, Эрив. площ. книжный Кіоск-„Парос“.

Տպագրութեան համար պատրաստ են մի քանի բրոշիւրներ։